ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2016թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ ու 597-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի «Գույք նվիրելու, որպես նվիրատվություն գույք ընդունելու և անհատույց օգտագործման իրավունքով հողամաս հատկացնելու մասին» N 175-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և 2-րդ կետի 1-ին ենթակետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Ծովակալ Իսակովի պողոտայի 17/6 հասցեում գտնվող 0.224875 հա մակերեսով հողամասը՝ համաձայն N 1 հավելվածի, նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

2. Հայաստանի Հանրապետությունից որպես նվիրատվություն ընդունել 0.250686 (0.037387+0.213299) հեկտար մակերեսով հողամասը՝ ճանապարհ նախատեսելու նպատակով ՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված հողամասերի սահմանները ենթակա են ճշգրտման՝ հատակագիծ թողարկելու ժամանակ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի «Գույք նվիրելու, որպես նվիրատվություն գույք ընդունելու և անհատույց օգտագործման իրավունքով հողամաս հատկացնելու մասին» N175-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով առաջարկվել է Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Ծովակալ Իսակովի պողոտայի 17/6 հասցեում գտնվող 0.224875 հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություն շենքի ընդլայնման նպատակով հողամասը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը անհատույց օգտագործման իրավունքով հատկացնելու համար: Նույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ 0.250686 (0.037387+0.213299) հեկտար մակերեսով հողամասը ճանապարհ նախատեսելու նպատակով, որպես նվիրատվություն փոխանցվել է Երևան համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության (նվիրաբերության) պայմանագիրը համարվում է լուծված:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության վերը նշված որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետը և 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հողամաս նվիրելու և գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողամաս նվիրելու և գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 1

Երևան քաղաքի ավագանու

_____-ի N _____-Ա որոշման



Հավելված 2

Երևան քաղաքի ավագանու

_____-ի N _____-Ա որոշման